Մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Որոտանի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի առաջին դասարանի դասվար (20**դասաժամ**), **Հայոց պատմություն** (7 **դասաժամ**), **Համաշխարհային պատմություն** (4 **դասաժամ**), **Հայոց եկեղեցու պատմություն** (2**դասաժամ**),**Հասարակագիտություն** (2 **դասաժամ**), **Կենսաբանություն** (4 **դասաժամ**) , **Ֆիզիկա** (4 **դասաժամ**), **Քիմիա** (4 **դասաժամ**),**ԹԳՀԳ** (3 **դասաժամ**),**Ինֆորմատիկա**(2 **դասաժամ**), **Կերպարվեստ** (2 **դասաժամ**),**Զինղեկ**(0,5 **դրույք**),**Իմիայրենիքը**(2**դասաժամ**) **առարկաների ուսուցիչների թափուր տեղեր:**

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023թ.-ի նոյեմբերի 21-ից մինչև դեկտեմբերի4-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 **թ**. **դեկտեմբերի** 6-**ին՝ ժամը** 12:00-**ին**, Որոտանի հիմնական դպրոցում, հասցե՝ՀՀ. Սյունիքի մարզ, Սիսիանի համայնք, բնակավայր Որոտնավան: Տեղեկությունների համար զանգահարել 077883089 հեռախոսահամարով: